

Սուլթան Մուրատին հետ մտերմօրէն կը թղթակցէր, նոյնիսկ «մայր Սուլթանուհիին» հետ նուէրներ կը փոխանակէր: Ճիշդ այս օրերուն կը կազմուէր Թուրքիոյ Անգլիական առևտրական ընկերութիւնը:

Ճէնքինսըն պատմական խեղաթիւրութեամբ կը ջանար Շիրվանի միամիտ Սանը Վենետիկցոց եւ, ուրեմն նաեւ անոնց հետ առևտրական գործակիցներուն դէմ դարձնել, հայերը վարկարեկ ընելու ստոր մտադրութեամբ:

Ճէնքինսըն իր թունալից խօսքերով թէեւ կըրցաւ շահիլ Շիրվանի Ապտուլահ Սանի գործակցութիւնը, սակայն, երբ Պարսից արքունիքը գնաց եւ նոյն միջոցները սկսաւ կիրարկել, ոչ միայն չյաջողեցաւ, այլ քիչ մնաց որ իր գլուխն ալ վրայ տար:

Շիրվանի Սանը որքան միամիտ, նոյնքան ալ անծանօթ էր բուն իրողութեանց: Մինչդեռ Թուրքիոյ եւ Եւրոպայի յարաբերութեանց մասին քաջ ծանօթ էին Թուրք-Վենետեան մարտընչումները:

Ճէնքինսընի Պարսից արքունիքը այցելելէն հազիւ քանի մը տարի վերջ, Վենետիկցի դեսպան Վինչէնձիօ Տ. Ալէքսանտրին Պարսից արքունիքը կ'այցելէր Թրքաց դէմ Վենետ-Պարսիկ դաշնակցութեան մը համար: Պարսից արքունիքի մէջ բազմաթիւ հայ վաճառականներ կային, որոնք մշտական յարաբերութիւն կամ երթուղարձի մէջ էին Եւրոպայի հետ: Բնական էր որ անոնք տեղեկութիւններ կը բերէին եւ սուտ կը հանէին Ճէնքինսընի դիտումնաւոր եւ վրան-բաց խեղաթիւրանքները:

Սակայն, Ճէնքինսընի քսութիւնները իրեն համար իսկ վտանգաւոր ըրաւ սա պարագան: Ծահ թահմապպ, Թրքաց դէմ երկար, ապարդիւն եւ քայքայիչ պատերազմներէ ծանձրացած, Սուլթան Սիւլէյմանի հետ խաղաղութիւն կնքելու բանակցութեանց մէջ էր ու Ճէնքինսընի Պարսից արքունիք հասած ստեղծ իսկ Թրքական դեսպանը հոն կը դտնուէր, եւ սրբէն երկու պետութիւնները համաձայնութեան հուն մը գտած եւ դաշինք մըն ալ կընքած էին:

Ճէնքինսըն, սակայն, քիչ մը անըմբռնելի յանդգնութեամբ եւ ինքնավստահութեամբ իր

սովորական գործին ձեռք դարկաւ: Ես չեմ ուզեր վերստին տալ մանրամասնութիւնները իր ապարդիւն նենգութեանց: Այդ մասին մանրամասն իր կարդին խօսած եմ «Հայրենիք» ամսագրի մէջ (Տես Հայեւանդլիական դրամագլխին պայքարը Կովկասի մէջ, 1550-1600 թրւականին», երկար եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւնս): Ծահը արհամարհեց Ճէնքինսընը, չպատուեց զայն եւ նոյնիսկ սպառնաց զինքը յանձնել Թուրքերուն, ինչ որ այդ Անգլիացի դրպարտիչին գլխատման պատճառ պիտի ըլլար: Մազապուրձ Ճէնքինսըն Շամախ վերագարձաւ, ուր այս անգամ աւելի ցած միջոցի մը դիմեց իր ձախողանքը դարմանելու համար:

* * *

ԺՉ դարու Հայոց պատմութիւնը դեռ չէ գրուած: Ինչպէս որ կարելի է տեսնել տարտընուած նիւթերէն, այդ դարը կարեւորագոյն չըջան մըն է հայ մշակոյթային, տնտեսական եւ քաղաքական ապրումներուն համար: Ազատագրական խմորումները քանիցս կը կրկնուին այդ դարուն մէջ:

Առանց անձամբ համամիտ ըլլալու այդ շարժումներուն ձեւին՝ հոս ատոնցմէ մէկ քանիին կ'ուզեմ համառօտ կերպով անդրադառնալ:

Ազատագրական այդ շարժումներէն մէկուն առանցքը կը կազմէր Ստեփաննոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը, որ 1548-ին հայ ականաւորներու պատգամաւորութեամբ մը Եւրոպայի աշխարհական եւ կրօնական իշխանութեանց դիմեց՝ իր ժողովուրդի փրկութեան գտնելու միամտութեամբ: Իրմէ վերջ իր յաջորդ Միքայէլ Սերաստացին 1562-ին այդ «գործը» շարունակեց: Ինք թէեւ Սերաստիայէն անդին չկրցաւ երթալ, սակայն Արզար Դպիրը «Իշխանացնելով» զայն յանձնարարականներով Հոովմ Պապին մօտ զրկեց: Բարեբախտաբար, Արզար Դպիր պատրաստամտութիւն ունեցաւ, փոխանակ հետապնդելու անգործադրելի քաղաքական ծրագրի մը երազը, սորվելու տպագրութեան մեծապէս օգտաշատ եւ կարեւոր արհեստը:

Վրացիներն ալ պակաս չէին հայերէն իրենց այս Եւրոպայէն ազատութիւն մուրալու